

Ք Ա Ղ Վ Ա Ծ Ք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԻՆՈԳՈՐԾԻՉՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ
ՀՐԱՄԱՆԻՑ

ք. Երևան

№ 4

28 հունվարի 2022թ.

Հայաստանի կինոգործիչների միության և կինոգիլդիաների անդամների, այլ կինոուղորտի այլ կառույցների ու ներկայացուցիչների համար 2022թ. մարտի 1-ից սահմանել հետևյալ **ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**:

Հայաստանի կինոգործիչների միության **յուրաքանչյուր կինոգիլդիային տարեկան 2 (երկու) անգամ** միության մեծ դահլիճը (կամ միության մյուս դահլիճները՝ ելնելով միջոցառման բնույթից) տրամադրել **ԱՆՎՃԱՐ**՝ ոչ կոմերցիոն նպատակներով պրոֆեսիոնալ գիլդիային վերաբերող ստեղծագործական միջոցառումների համար (կինոպրեմիերաներ, կինոքննարկումներ, մրցանակաբաշխություններ և այլն): Երկու տարին մեկ անգամ Հայաստանի **կինոգիլդիաների մրցանակաբաշխության** անցկացման համար միության մեծ դահլիճը տրամադրել **ԱՆՎՃԱՐ**:

Միության կոնֆերանսների սրահը կինոգիլդիաներին, Ազգային կինոակադեմիային **տրամադրել ԱՆՎՃԱՐ**՝ ոչ կոմերցիոն նպատակներով պրոֆեսիոնալ գիլդիային, Ազգային կինոակադեմիային վերաբերող ստեղծագործական քննարկումների կազմակերպման համար:

Հայաստանի կինոգործիչների միության անդամներին տարեկան 1 (մեկ) անգամ միության մեծ դահլիճը, 1 (մեկ) անգամ՝ փոքր դահլիճը, 1 (մեկ) անգամ «Բուխարու սրահը» և 1 (մեկ) անգամ փոքր կինոսրահը տրամադրել **ԱՆՎՃԱՐ**՝ սեփական ֆիլմերի պրեմիերաների, հորեյանական երեկոների կամ մեծարումների կազմակերպման համար՝ ոչ կոմերցիոն նպատակներով:

Կինոյի և թատրոնի պետական ինստիտուտի ուսանողներին դեբյուտային ֆիլմերի ցուցադրությունների, ուսանողական կինոպրեմիերաների համար **միության մեծ դահլիճը** (կամ միության մյուս դահլիճները՝ ելնելով միջոցառման բնույթից) տարեկան տարեկան 2 (երկու) անգամ տրամադրել **ԱՆՎՃԱՐ**:

Հայաստանյան ճանաչված կինոփառատոներին փառատոների բացման արարողությունների համար տարեկան 1 (մեկ) անգամ միության մեծ դահլիճը (կամ միության մյուս դահլիճները՝ ելնելով միջոցառման բնույթից) տրամադրել **ԱՆՎՃԱՐ**:

Հայաստանի կինոփառատոներին փառատոնային օրերին կինոսեանսների կազմակերպման համար միության մեծ դահլիճը (կամ միության մյուս դահլիճները՝ ելնելով միջոցառման բնույթից) տրամադրել **սահմանված սակագներից 50 % զեղչով**:

Արտերկրում ապրող և ստեղծագործող հայազգի կինոռեժիսորներին Հայաստանի կինոգործիչների միության ենթակառուցվածքները տրամադրել **սահմանված սակագներից 30 % զեղչով**:

Կինոգիլդիաների և միության անդամների համար միության ենթակառուցվածքներում իրականացվող կինոնկարահանումների համար սահմանել 50 տոկոս զեղչ՝ սահմանված սակագներից: Նկարահանումն իրականացնելու դեպքում Կինոգործիչների միության հիշատակումը ենթադրերում պարտադիր է: Այս պայմանի մերժման դեպքում նկարահանումներն իրականացվում են սակագների 100 տոկոսի վճարումով:

Կինոգիլդիաների և միության անդամներ չհանդիսացող ստեղծագործողների համար կինոնկարահանումները միության ենթակառուցվածքների օգտագործմամբ իրականացվում է սահմանված սակագների 20 տոկոս զեղչով: Նկարահանումն իրականացնելու դեպքում Կինոգործիչների միության հիշատակումը ենթադրերում պարտադիր է: Այս պայմանի մերժման դեպքում նկարահանումներն իրականացվում են սակագների 100 տոկոսի վճարումով:

Հայաստանի Ազգային կինոկենտրոնին, Ազգային կինոակադեմիային, փաստավավերագրական ֆիլմերի «Հայկ» կինոստուդիային տարեկան 1 (մեկ) անգամ միության մեծ դահլիճը (կամ միության մյուս դահլիճները՝ ելնելով միջոցառման բնույթից) ֆիլմերի պրեմիերաների, սեփական այլ միջոցառումների համար՝ ոչ կոմերցիոն նպատակներով, տրամադրել ԱՆՎՃԱՐ:

Հեռուստատեսային ռեպրտաժների նկարահանումների համար միության ենթակառուցվածքներում սահմանվում է նկարահանման անվճար լինելու ռեժիմ, եթե առկա է կինոգործիչների միության միջոցառումները լուսաբանելու՝ հեռուստատեսության հետ կոզվա] պայմանագիր կամ ձեռք բերված համաձայնություն: Այլ պայմաններում իրականացվում է սակագների 100 տոկոսի վճարում:

Բոլոր միջոցառումների գրաֆիկները համաձայնեցնել միության համապատասխան ծառայության հետ:

Բոլոր միջոցառումների ժամանակ, եթե առկա է գովազդային և մեդիա արտադրանք, Հայաստանի կինոգործիչների միությունը պետք է նշվի որպես հովանավոր՝ միության լոգոյի առկայությամբ՝ անկախ դահլիճի տրամադրման ձևից:

Հայաստանի կինոգործիչների
միության նախագահ

Հ.Խաչատրյան

